ecotun

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № [redacted]

ք. Երևան [redacted]

«Էկոտուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հասցե՝ ՀՀ, ք. Երևան, [redacted] գրանցման համար՝ [redacted] ՀՎՀՀ՝ [redacted] (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս տնօրեն [redacted] (նույնականացման քարտ՝ [redacted], տրված [redacted]-ի կողմից [redacted]թ., հաշվառված՝ ՀՀ, ք. Երևան, [redacted], ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և [redacted] ծնված [redacted]թ., նույնականացման քարտ [redacted], տրված [redacted]-ի կողմից, (այսուհետ՝ Պարտապան) (այսուհետ՝ Պատվիրատու) մյուս կողմից, վարեցին բանակցություններ և կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել Պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է Պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Սույն Պայմանագրի համաձայն Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները.

Պատվիրատուի կողմից տրված անհրաժեշտ փաստաթղթերի, աշխատանքային նախագծի, համար N [redacted] տրված [redacted]թ շինթույլտվության հիման վրա և լիազորագրի սահմաններում և Պատվիրատուի անունից կազմակերպել ՀՀ ք. Երևան [redacted] վարչական շրջան [redacted] փ. թիվ [redacted] հ. հասցեում

Պատվիրատու [redacted] Կատարող [redacted]

ecotun

առանձնատան մասնակի շինարարական աշխատանքները: Ըստ վերը նշված աշխատանքային նախագծի՝

- Տան երկրորդ հարկի առտաքին ֆասադային պատերի իրականացում, արժեքը [redacted] մլն դրամ:
- Տան առաջին և երկրորդ հարկերի միջնորմային պատերի իրականացում մինչև 100%, արժեքը [redacted] մլն դրամ:
- Տան առաջին հարկի ներքին հարդարման իրականացում մինչև 50%, արժեքը [redacted] մլն դրամ:
- Տան երկրորդ հարկի ներքին հարդարման իրականացում մինչև 50%, արժեքը [redacted] մլն դրամ:
- Արտաքին բարեկարգման, բետոնով արտաքին թեքահարթակների և հատակներ հարթեցման և պարիսպների շարի 50% իրականացում, արժեքը [redacted] մլն դրամ:
- Պարիսպների շարի 100% իրականացում և ավտոտնակի վրայի մետաղական ծածկով շվաքանու իրականացում, արժեքը [redacted] մլն դրամ:
- Տան լուսամուտների, ավտոտնակի ավտոմատ դարպասի, տան մուտքի և արտաքին պարսպի դռների տեղադրում, արժեքը [redacted] մլն դրամ:
- Տան ներքին կոսմետիկ հարդարման 100% իրականացում, արժեքը [redacted] մլն դրամ:
- Արևային հոսանքի պանելների տեղադրում մինչև [redacted] կվտ հզորությամբ, տան ներքին լուսավորության, ներքին ջեռուցման համակարգի, սանհանգույցների սալիկապատման իրականացում, արժեքը [redacted] մլն դրամ:
- Պարիսպի և տան միջակայքում մինչև [redacted] քմ մետաղական շվաքանու իրականացում առանց ծածկի թիթեղապատման, արժեքը [redacted] մլն դրամ:
- Կոմունիկացիոն ելքերի իրականացում՝ մինչև [redacted] գծ/մ, արժեքը [redacted] մլն դրամ:

Պատվիրատու [redacted]

Կատարող [redacted]

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն պարտավոր է.

2.1.1. Պայմանագրի 1.2. կետում նախատեսված ծառայությունների պատշաճ մատուցման նպատակով սպառիչ կերպով տրամադրել իր տիրապետության ներքո գտնվող և ծառայության մատուցման համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը՝ անկախ դրա արտահայտման ձևից.

2.1.2. առանց Կատարողի հետ նախապես համաձայնեցնելու չկատարել այնպիսի գործողություններ, որոնք կարող են դժվարացնել կամ անհնարին դարձնել Կատարողի կողմից Պայմանագրից բխող պարտավորությունների կատարումը.

2.1.3. Պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով վճարել սույն պայմանագրի 1.2. կետում նախատեսված ծառայությունների համար.

2.1.4. կատարել ՀՀ օրենսդրությունից և սույն պայմանագրից բխող այլ պարտավորություններ:

2.2. Կատարողը պարտավոր է.

2.2.1. Պայմանագրի 1.2. կետում նախատեսված ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.2.2. հետևել Պատվիրատուի տված հանձնարարություններին և չդրսևորել նրա շահերին հակասող վարքագիծ.

2.2.3. Պատվիրատուի բանավոր և /կամ/ գրավոր պահանջով նրան տրամադրել տեղեկատվություն՝ Պայմանագրի համաձայն մատուցվող ծառայությունների ընթացքի և որակի վերաբերյալ.

2.2.4. աշխատանքի (մատուցված ծառայությունների) արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ ու անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև դրանք չպահպանելու հնարավոր հետևանքների մասին.

Պատվիրատու [redacted] Կատարող [redacted]

ecotun

2.2.5. աշխատանքը կատարել (ծառայությունը մատուցել) իր ուժերով, նյութերով և միջոցներով.

2.2.6. Պատվիրատուին փոխանցել սույն պայմանագրի հիման վրա իր կողմից ստեղծված արդյունքների նկատմամբ բոլոր իրավունքները.

2.2.7. սույն պայմանագրից բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ամբողջ ծավալով հատուցել Պատվիրատուի կրած վնասները.

2.2.8. կատարել ՀՀ օրենսդրությունից և սույն պայմանագրից բխող այլ գործողություններ:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

3.1. Սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունների մատուցման դիմաց Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին վճարել [redacted]) ՀՀ դրամ (ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկատեսակները), որը վերանայման ենթակա չէ:

3.2. Սույն պայմանագրի 3.1. կետում նշված պայմանագրի գինը Կատարողին վճարվում է պայմանագրի հավելված 1-ով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

3.3. Պատվիրատուի կողմից Կատարողին սույն պայմանագրով վճարման ենթակա գումարները պետք է վճարվեն Պայմանագրում նշված Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.4. Այն դեպքում, երբ Պատվիրատուն խախտում է պայմանագրի հավելված 1-ով սահմանված վճարման ժամկետները, ապա պարտավոր է Կատարողին վճարել տուգանք՝ պայմանագրի 3.1 կետով նախատեսված գումարի 10 տոկոսի չափով և տույժ՝ կետանցված յուրաքանչյուր օրվա համար ըստ ժամանակացույցի վճարման ենթակա գումարի 0,12 տոկոսի չափով:

Պատվիրատու [redacted] Կատարող [redacted]

3.5. Այն դեպքում, երբ Պատվիրատուն խախտում է պայմանագրի հավելված 1-ով սահմանված վճարման ժամկետները, ապա Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջելու 5 աշխատանքային օրվա ընթացքում կատարելու պայմանագրի 3.1 կետով նախատեսված գումարի ամբողջական վճարում:

3.6. Սույն պայմանագրի 1.2. կետով որոշված ծառայությունների պատշաճ մատուցման փաստը հաստատվում է երկկողմանի կնքված հանձնման-ընդունման ակտով: Ծառայությունների պատշաճ մատուցման դեպքում հանձնման-ընդունման ակտը պետք է ստորագրվի ոչ ուշ, քան սույն պայմանագրի 4.3. կետում նշված պահից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

3.7. Սույն պայմանագրի 1.2. կետով որոշված յուրաքանչյուր ծառայությունների պատշաճ մատուցման փաստը հաստատվում է երկկողմանի կնքված միջանկյալ ավարտական ակտով:

3.8. Փորձաքննության արդյունքներով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

3.9. Այն դեպքում, երբ Կատարողն ընդունում է ծառայությունների ոչ պատշաճ մատուցման փաստը, ապա Կատարողի և Պատվիրատուի միջև կնքվում է Ծառայությունների ոչ պատշաճ մատուցման ակտ, որով սահմանվում են բոլոր թերությունները և դրանց վերացման ժամանակացույցը: Նշված դեպքում Կատարողը պարտավոր է իր միջոցների հաշվին վերացնել թերությունները:

3.10. Սույն պայմանագրի կատարման անհնարինության դեպքում, որը ծագել է Պատվիրատուի մեղքով, Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջելու կատարել փաստացի մատուցված ծառայությունների ծավալին համապատասխան վճարում, ինչպես նաև տուգանք՝ պայմանագրի 3.1 կետով նախատեսված գումարի 10 տոկոսի չափով:

3.11. Այն դեպքում, երբ կատարման անհնարինությունը ծագել է այնպիսի հանգամանքներից, որոնց համար կողմերից որևէ մեկը պատասխանատվություն չի

Պատվիրատու [redacted] Կատարող [redacted]

ecotun

զրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 2 (երկու) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն այդ հիմքով իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն պայմանագրի լրացումներն ու փոփոխությունները կատարվում են Կողմերի համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.2. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Կողմերի կամ նրանցից որևէ մեկի հասցեի փոփոխման դեպքում Կողմերը պարտավորվում են այդ մասին ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում տեղեկացնել միմյանց: Նման հաղորդման բացակայության դեպքում փաստաթղթերն ուղարկվում են նրանց վերջին հայտնի գործունեության հասցեներով և համարվում են հանձնված, թեկուզև հասցեատերն այդ հասցեում այլևս չի գտնվում:

6.3. Սույն պայմանագիրը կազմված է հայերենով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Էկոտուն» ՍՊՐ հասցե՝ ՀՀ, ք. Երևան, [redacted] ՀՎՀՀ՝ [redacted] Հ/հ՝ [redacted] Տնօրեն՝ [redacted]	[redacted] ծնված [redacted]թ., նույնականացման քարտ [redacted], տրված [redacted]-ի կողմից Պատվիրատու՝ [redacted]

Պատվիրատու [redacted]

Կատարող _____

ecotun

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ

ք. Երևան [redacted]թ.

«Էկոտուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, [redacted], գրանցման համար՝ [redacted], ՀՎՀՀ՝ [redacted]) (այսուհետ՝ Պարտատեր)՝ ի դեմս տնօրեն [redacted] Պետրոսյանի (նույնականացման քարտ՝ [redacted], տրված [redacted]-ի կողմից [redacted]թ., հաշվառված՝ ՀՀ, ք. Երևան, [redacted] տուն), ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և [redacted] ծնված [redacted]թ., նույնականացման քարտ [redacted], տրված [redacted]-ի կողմից, (այսուհետ՝ Պարտապան) մյուս կողմից, կնքեցին սույն միջանկյալ ավարտական ակտը հետևյալի մասին.

1. Սույնով [redacted] ընդունում է «Էկոտուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից, համար [redacted] պայմանագրի 1.2. կետով որոշված, ծառայությունների պատշաճ մատուցման փաստը և «Էկոտուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հանդեպ [redacted]թ. դրությամբ [redacted] ([redacted]) ՀՀ դրամ գումարի չափով պարտքի առկայությունը և պարտավորվում է նշված գումարը վճարել հետևյալ ժամանակացույցին համապատասխան.

1. [redacted]թ. – [redacted] / ՀՀ դրամ,
2. [redacted]թ. – [redacted] / ՀՀ դրամ,
3. [redacted]թ. – [redacted] / ՀՀ դրամ,
4. [redacted]թ. – [redacted] / ՀՀ դրամ,
5. [redacted]թ. – [redacted] / ՀՀ դրամ,
6. [redacted]թ. – [redacted] / ՀՀ դրամ,
7. [redacted]թ. – [redacted] / ՀՀ դրամ,

Պարտատեր [redacted] Պարտապան [redacted]